ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 120 - Ա
09 հուլիսի 2014 թ.

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով

որոշում եմ՝

1. Մարզի կենսագործունեությանն առնչվող հիմնախնդիրները լավագույնս լուսաբանելու համար Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից 225000 /երկու հարյուր քսանհինգ հազար/ դրամ հատկացնել մարզի մամուլի և զանգվածային լրատվամիջոցների աշխատակիցներին՝ յուրաքանչյուրին 25000 /քսանհինգ հազար/ դրամի չափով պարգևատրելու նպատակով՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ, գումարը վճարել մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ Հասմիկ Շահբազյանի միջոցով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2014 թ. հուլիսի 9 -ի
N 120 - Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ՄԱՐԶԻ ՄԱՄՈՒԼԻ ԵՎ ԶԼՄ-ՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ

1. Խլղաթյան Խոսրով - <<Գեղամա աշխարհ>> մարզային թերթի խմբագիր
2. Հովակիմյան Տիգրան - <<Քյավառ>> հեռուստաընկերության լրագրող
3. Խաչատրյան Վարդգես - <<Քյավառ>> հեռուստաընկերության տեսագրող օպերատոր
4. Մալխասյան Վրույր - <<Զանգակ>> հեռուստաընկերության լրագրող
5. Կարապետյան Արտակ - <<Զանգակ>> հեռուստաընկերության տեսագրող օպերատոր
6. Բարսեղյան Սուրեն - <<STV-1>> հեռուստաընկերության լրագրող
7. Հովհաննիսյան Գնել - <<STV-1>> հեռուստաընկերության տեսագրող օպերատոր
8. Հայրապետյան Պապ - <<Սևան>> թերթի խմբագիր
9. Շահբազյան Հասմիկ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

Կատարող՝ՖՍՏԶ Վարչություն
Ա.Բաղեյան